ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 7

05.06.2020թ. կնքված և սեղանամատյանում թիվ 2393 համարով գրանցված անշարժ գույքի վարձակալության պայմանագրի վճարման ժամանակացույցը հաստատելու մասին

ք. Երևան «13» փետրվարի 2026թ.

«Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն», (հասցե՝ Հայաստանի Հանրապետության, ք. Երևան, Մ. Խորենացու փ. 3. 7, գրանցման համար՝ 286.184.1025088, ՀՎՀՀ 02647057), ի դեմս գլխավոր քարտուղար Էդգար Ժորայի Գևորգյանի, որի անունից լիազորագրով հանդես է գալիս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գնումների կազմակերպման և վարչատնտեսական ապահովման վարչության վարչատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ **Գագիկ Մամիկոնի Երեղյանը** /ծնված՝ 15.01.1994թ, նույնականացման քարտ՝ 009096785, տրված 16.02.2018թ., 011 կողմից/ այսուհետ՝ **«ՎԱՐՁԱԿԱԼ»,** մի կողմից և **Դավիթ Ալբերտի Իսահակյանը** /ծնված՝ 03.09.1984թ., անձնագիր՝ AX0501608, տրված 02.10.2024թ., 029-ի կողմից, ՀԾՀ՝ 1309840792/, **Արամ Գրիգորի Ստեփանյանը** /ծնված՝ 28.09.1986թ., անձնագիր՝ BA3579788, տրված՝ 08.07.2021 թվականին, 010-ի կողմից, ՀԾՀ՝ 3808860468/, **որը հանդես է գալիս իր** և **Բեռնի Վիլդենմաննի** /ծնված՝ 16.02.1960թ., անձնագիր՝ C8RZ8ZCWY/ և **Անդրեա Պետրա Վիլդենմաննի** /ծնված՝ 29.09.1960թ., անձնագիր՝ C8RZG8C69/ անունից /լիազորագիրը հաստատված է 20.11.2024թ.-ին Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կառլսռուհե քաղաքի նոտար Ֆիլիպ Ունգանի կողմից վավերացված լիազորագրով, ապոստիլով վավերացում՝ 05.12.2024 E 9101a LG-2360/2024/ այսուհետ՝ **«ՎԱՐՁԱՏՈՒ»,** մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 05.06.2020թ. կնքված և սեղանամատյանում թիվ 2393 համարով գրանցված անշարժ գույքի վարձակալության մասին պայմանագիրը /այսուհետը Պայմանագիր/, ինչպես նաև հիմք ընդունելով պայմանագրի ժամկետը մինչև 2027 թվականի դեկտեմբերի երեսունմեկը երկարացնելու մասին 2025 թվականի դեկտեմբերի 15-ին կողմերի միջև կնքված համաձայնագիրը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1 Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով ՝ կողմերը որոշեցին

1.1. Հաստատել 2026թ. ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված 1-ի:

1.2. Սույն համաձայնագրով նախատեսված պայմանները տարածել կողմերի միջև 2026թ. հունվարի 1-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

2. Այլ պայմաններ

2.1. Պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2. Սույն համաձայնագիրը կնքված է հայերենով, երեք /3/ հավասարազոր օրինակից: Համաձայնագրի մեկ օրինակը պահվում է նոտարի գործերում, իսկ մյուս օրինակները տրվում են կողմերին:

2.3. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

2.4. Սույն համաձայնագրի հավելված 1-ը հանդիսանում է համաձայնագրի անբաժանելի մասը:

«ՎԱՐՁԱՏՈՒ»	**«ՎԱՐՁԱԿԱԼ»**
0082, ՀՀ, Երևան, Ծ. Իսակովի 10/16	**ՀՀ պետական եկամուտների կոմիտե**
«Ամերիաբանկ» ՓԲԸ	**ք. Երևան, Մ. Խորենացու 3, 7**
Հ/Հ 1570023182910100	**ՀՎՀՀ 02647057**
Համատեղ հաշիվ	**Հ/Հ 900011054013**
Բեռնի Վիլդենմաննի և Անդրեա Պետրա Վիլդենմաննի	**Կենտրոնական գանձապետարան**
	Գործառնական վարչություն
Լիազորված անձ	**Լիազորված անձ՝**

_____ Ա. Ստեփանյան
(ստորագրություն)

_____ Ա. Ստեփանյան
(ստորագրություն)

_____ Դ. Իսահակյան
(ստորագրություն)

---------- Գ. Երեղյան
(ստորագրություն)

Նոտարական ակտի կոդ: 453-20260213-117-9812756
Նոտարական ակտի գաղտնագիր: LWNNTZ

Հայաստանի Հանրապետություն, Երևան
Երկու հազար քսանվեց թվականի փետրվարի տասներեքին

Սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ «Երևան» նոտարական տարածքի նոտար Նոնա Գասպարյանիս կողմից:

Կողմերը համաձայնագիրն ստորագրեցին իմ ներկայությամբ: Համաձայնագիրն ստորագրած անձանց ինքնությունը, նրանց գործունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձի իրավունակությունը և լիազորված անձանց լիազորություններն ստուգված են:

Գրանցված է գրանցամատյանում 2599

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ, որը չի ներառում ավելացված արժեքի հարկը՝ 20% ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Նոնա Խաչիկի Գասպարյան

Հավելված 1
05.06.2020թ. կնքված և սեղանամատյանում թիվ 2393 համարով
գրանցված անշարժ գույքի վարձակալության պայմանագրի
թիվ 7 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2026թ. ՀՀ ՊԵԿ բյուջետային միջոցների հաշվին՝ ըստ ամիսների՝ ընդ որում										
	Ծառայության անվանումը	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը՝ Տարի
1.	ՀՀ, ք. Երևան, Ծ. Իսակովի պողոտա թիվ 10/16 հասցեում գտնվող 1836.38քմ մակերեսով տարածքի վարձակալություն	20,680,000	31,020,000	41,360,000	51,700,000	62,040,000	72,380,000	82,720,000	93,060,000	103,400,000	124,080,000	**124,080,000**

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

«ՎԱՐՁԱՏՈՒ»
0082, ՀՀ, Երևան, Ծ. Իսակովի 10/16
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570023182910100
Համատեղ հաշիվ
Բեռնի Վիլդենմաննի և Անդրեա Պետրա Վիլդենմաննի
Լիազորված անձ

_____ **Ա. Ստեփանյան**
(ստորագրություն)

_____ **Ա. Ստեփանյան**
(ստորագրություն)

_____ **Դ. Իսահակյան**
(ստորագրություն)

«ՎԱՐՁԱԿԱԼ»
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ. Խորենացու 3, 7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011054013
Կենտրոնական գանձապետարան
Գործառնական վարչություն
Լիազորված անձ՝

---------- **Գ. Երեղյան**
(ստորագրություն)